



**FRIEDRICH
EBERT
STIFTUNG**

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԻԶՆԵՍԻՆ ԽՈԶԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՓՄՁ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱԿՐՈ ԵՎ ՄԻԿՐՈ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2015



Նախագիծը հրականացվել է Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի
աջակցությամբ: Հեղինակների՝ գեկույցում տեղ գտած
դիրքորոշումներն ու կարծիքները, պարտադիր չէ, որ համընկնեն
Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի պաշտոնական դիրքորոշման հետ:

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Առաջին անգամ ՀՀ-ում Ֆրիդրիխ - Էբերտ Հիմնադրամի աջակցությամբ իրականացվում է «ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն» նպատակ ունենալով բացահայտել Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները մակրո և միկրո մակարդակներում: ՀՀՄ-ն հայտնում է իր երախտագիտությունը նմանատիպ վերլուծական աշխատանքներն աջակցելու համար, քանի որ ՀՀՄ նախկին վերլուծությունները, «ՓՄՁ կարիքների գնահատումը» բացահայտել էին նմանատիպ բազմակողմանի վերլուծություն իրականացնելու անհրաժեշտությունը:

ՀՀՄ նաև իր երախտագիտությունն է հայտնում ՓՄՁ-ներին, պետական և ոչ պետական մարմիններին, ՓՄՁ աջակցող կազմակերպություններին և բոլոր գործընկերներին սույն հետազոտությանը մասնակցելու և աջակցելու կապակցությամբ:

Վերլուծական զեկույցը օգտակար է սոցիալ-տնտեսական բնագավառում տարբեր բարեփոխումների, ՓՄՁ զարգացման և ընդհանուր առմամբ ՀՀ տնտեսության զարգացման տեսանկյունից: Վերլուծական զեկույցից կարող են օգտվել ՀՀ պետական մարմինները, բիզնեսին աջակցող կազմակերպությունները, ՓՄՁ-ները, միջազգային դոնորները, ինչպես նաև բիզնես հիմնելու ցանկություն ունեցող քաղաքացիները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1.1. ՓՄՁ-ները Հայաստանում.....	3
1.2 Հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը.....	4
1.2.1. Վերլուծության նպատակը.....	4
1.2.2. Մեթոդաբանությունը.....	4
1.2.3. Ընտրանքային մեթոդը.....	5
2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԻԶՆԵՍԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱԿՐՈ ԵՎ ՄԻԿՐՈ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ (ՓՄՁ-ՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏ).....	6
3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԻԶՆԵՍԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏ).....	18
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	21
4.1. Եզրակացություններ՝ ըստ ՓՄՁ-ների.....	21
4.2. Եզրակացություններ՝ ըստ պետական մամիների և ՓՄՁ աջակցման կազմակերպությունների.....	22
5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	23

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՓՄՁ-ները Հայաստանում

ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ուղղված է ՀՀ տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործում ՓՄՁ ոլորտի ներուժի լիարժեք օգտագործմանն ու նրա դերի բարձրացմանը: Այս քաղաքականության հիմնարար փաստաթղթերից է հանդիսանում ՀՀ կառավարության կողմից 2000թ. օգոստոսին ընդունված «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները», որտեղ ներկայացված են ՓՄՁ զարգացման պետական քաղաքականության տնտեսական, սոցիալական և քաղաքական նպատակներն ու նրանց իրագործման հիմնական ուղղությունները: Վերոհիշյալ փաստաթղթի ընդունումը նախապայմաններ ստեղծեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունման համար, որն առաջին անգամ սահմանեց Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները և ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղությունները:

Ըստ ՀՀ Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին օրենքի Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են՝

- 1) գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը:
- 2) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը:
- 3) միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

2009 թվականի տվյալներով ՓՄՁ-ների մասնաբաժինը բիզնես ոլորտում կազմել է գրանցված ձեռնարկությունների 97.7% ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ՝ 42.2% ՓՄՁ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ՝ 42.5%:

Նոր մեթոդաբանությամբ, ըստ վերոնշյալ չափանիշների, ՓՄՁ-ներըն ապահովում են ՀՆԱ-ի մոտ 30%-ը (2014թ. դրությամբ):

Ըստ ՓՄՁ 2ԱԿ-ի ներկայացրած տվյալների՝ 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում գործունեություն է իրականացրել 73,925 ՓՄՁ, ինչը կազմում է ակտիվ գործունեություն իրականացնող տնտեսվարողների ընդհանուր թվաքանակի 98.%-ը: 2012թ. ընթացքում ՓՄՁ-ների քանակը 2010թ.-ի համեմատ՝ ավելացել է մոտ 25%: Սակայն, իրականում ինչպիսի աճի կամ անկման դինամիկա ունեն ՓՄՁ-ներն ՀՀ-ում և որոնք են զարգացման հիմնական խոչընդոտները մենք բացահայտել են ներկայացվող վերլուծության շրջանակում, որն իրականացվել է 2015թ. ապրիլ-հուլիս ժամանակահատվածում:

1.2 Հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը

Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՄ) իրականացրել է ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն մակրո և միկրո մակարդակներում 2015թ. ապրիլ-հուլիս ժամանակահատվածում:

1.2.1. Վերլուծության նպատակը

Սոցիոլոգիական հարցման և վերլուծությունների միջոցով պարզել, գնահատել և փաստել ՀՀ-ում ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրները, ստվերային տնտեսության առաջացման պատճառները, ՓՄՁ զարգացման համար առավելապես ազդեցիկ գործոնները:

Վեր հանել այն մարտահրավերները, որոնք առկա են գործարար միջավայրում և որոնք անհրաժեշտ են հրատապորեն բարելավել:

Հետազոտությունը ներառում է նաև այն փոփոխությունները, որոնք արձանագրվել են վերջին հինգ տարիների ընթացքում՝ առաջընթացի և հետընթացի մասով, ինչպես նաև պարզել՝

1. Գոհ է արդյոք գործարար համայնքը ՀՀ կառավարության 2014-2015թթ. օրենսդրական բարեփոխումներից.
2. Ինչպես է գնահատվում 2009-2014թթ. ռեֆորմների ազդեցությունը ՓՄՁ-ների վրա
3. ՀՀ կառավարության կողմից ինչպիսի քայլեր են անհրաժեշտ ձեռնարկել ՓՄՁ զարգացման համար և այլն:

1.2.2. Մեթոդաբանությունը

Հաշվի առնելով ուսումնասիրվող թեմայի առանձնահատկությունները, ինչպես նաև հետազոտության խնդիրներն ու նպատակը, տեղեկատվության բացը լրացնելու նպատակով ուսումնասիրությունն իրականացվել է 3 զուգահեռ փուլերով՝

1. զուգորդելով տեղեկատվության հավաքումը, մշակումը և վերլուծությունը տարբեր պետական և ոչ պետական մարմինների ու միջազգային կազմակերպությունների զեկույցների և գնահատականների հիման վրա, ինչպես նաև ՓՄՁ աջակցման ծրագրերի արդյունքների հիման վրա,
2. քանակական՝ ստանդարտացված հարցում և որակական՝ ազատ ու կիսաստանդարտացված հարցազրույց ՓՄՁ-ների շրջանում,
3. ստանդարտացված և որակական ազատ հարցերով ձևավորված հարցաշարով հարցազրույց ՓՄՁ ոլորտին առնչվող պետական և ոչ պետական մարմինների և վերլուծական կենտրոնների շրջանում:

Հետազոտության իրականացման նպատակով կազմվել են հարցաշարեր 2 տարբերակով.

1. Գործարար համայնքի ներկայացուցիչների համար, ներառելով ՓՄՁ ոլորտի առանձնահատկությունները,
2. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՓՄՁ ՉԱԿ-ի, տարբեր վերլուծական կենտրոնների և տնտեսագետ վերլուծաբանների համար:

Հարցաշարերը կազմվել են ՀԳՄ-ի կողմից, քննարկվել համախոհների և գործընկերների հետ: Հաշվի առնվել ՓՄՁ-ների և ՀԳՄ անդամ կազմակերպությունների տեսակետները, ինչպես նաև նախկինում իրականացված կարիքների գնահատման արդյունքները:

Հարցաթերթերում ներառված են՝

- 1) Գործարար համայնքի ներկայացուցիչների համար 18-ական հարց, որոնք նախատեսում են 171 պատասխաններ, այդ թվում 158-ը ուղղորդված:
- 2) ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՓՄՁ ՉԱԿ, Վերլուծական կենտրոնների և տնտեսագետ վերլուծաբանների համար 9-ական հարց, որոնք նախատեսում են 74-ական պատասխաններ, այդ թվում 63-ը ուղղորդված:

1.2.3. Ընտրանքային մեթոդը

Հարցմանը մասնակցել են՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՓՄՁ ՉԱԿ և վերլուծական կենտրոնների պատասխանատու աշխատակիցներ (վարչության պետեր, գլխավոր մասնագետներ), տնտեսագետ վերլուծաբաններ, գործատուներ: Հարցման տվյալները օգտագործվել և հրապարակվում են ընդհանրացված տեսքով:

Հետազոտության տվյալները հավաքագրվել են, մուտքագրվել ու ամփոփվել, որից հետո իրականացվել է արդյունքների վերլուծություն մշակված SPSS ծրագրով: Պատասխանները հաշվարկվել և բերվել են օգտագործման համար տեսանելի ձևաչափի և տոկոսային հարաբերակցության:

Հարցումներն իրականացվել են համաձայն հետևյալ երկու հարցաթերթերի՝


Ա. Գործարար համայնքի ներկայացուցիչների համար, որին մասնակցել են 107 ՓՄՁ-ներ, նախատեսված 100-ի փոխարեն Երևանից և մարզերից (Բաժին 2):

Բ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՓՄՁՉԱԿ, Վերլուծական կենտրոնների և տնտեսագետ վերլուծաբանների համար: Ընդհանուր թվով՝ 30 մասնակից (Բաժին 3):


2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԻԶՆԵՍԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱԿՐՈ ԵՎ ՄԻԿՐՈ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ (ՓՄՁ-ՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏ)

Ինչպես վերևում ներկայացվել է հարցմանը մասնակցել են 107 միկրո ձեռնարկություններ և ՓՄՁ-ներ, որոնց բաշխվածությունը ըստ ՀՀ մարզերի և Երևանի ներկայացված է ստորև պատկերում:

Պատկեր 1. Հարցման մասնակիցների բաշխվածությունն Երևանում և Մարզերում




Պատկեր 2. Հարցման մասնակիցների բաշխվածությունն ըստ մարզերի




Սոց. հարցման 107 մասնակիցների բիզնեսի գործունեության ժամկետները եվ աշխատողների թվաքանակը:

Պատկեր 3. Ինչքան ժամանակ է ձեր բիզնեսը գործում



Հարցման մասնակիցների թվում 10 տարի և ավելի գործող բիզնես ունեցողները կազմում են հարցվածների կեսից ավելին (55.4%), որը պատասխաններում կարևոր է այն առումով, որ ձեռնարկատիրության ոլորտում երկար տարիների փորձառությամբ ՓՄՁ-ների պատասխանները և բիզնեսի զարգացման տարիների փորձը արժեքավոր են, հավաստի և կշռադատված, իսկ 4-9 տարի հարցվածների 24%-ը:

Պատկեր 4. Քանի աշխատող ունեք




Աշխատողների թվաքանակի տեսանկյունից հարցվածների ճնշող մեծամասնությունը (56.2%) ունեն 1-10 աշխատակից: 31-50 և ավելի աշխատակից ունեցողների թիվը հարցվածների մեջ կազմում է մոտավորապես 17%:

Որոնք են Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները հարցին 107 հարցվածների պատասխանների արդյունքում պատկերն այսպիսին է:


Որոնք են Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները

Պատկեր 5. ՀՀ-ում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները (Օրենսդրություն)




Հարցվածների 61%-ը գտնում է, որ հարկային օրենքներում տեղ գտած ոչ կոնկրետ, երկիմաստ ձևակերպումները և օրենքների հաճախակի փոփոխությունները օրենսդրական հիմնական խոչընդոտ են հանդիսանում բիզնեսի դիսամիլ աճի համար: Ի դեպ այս խնդիրը դեռևս 2007թ-ի հարցումներում, մեկ այլ ՀԳՀՄ վերլուծության շրջանում իր ուժգնությունը պահպանել է: 21.1%-ը նշել է, հարկերի բարձր լինելը: Չնայած ՀՀ կառավարության 2014-2015թթ. դրական բարեփոխումներին, այնուամենայնիվ հարկերը ՓՄՁ-ների համար դեռևս համարվում են բարձր:

Պատկեր 6. (ՀՀ-ում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները) Ծուկա և մրցակցություն




Անհավասար մրցակցության և շուկա մուտք գործելու տեսանկյունից, հարցվածների 34.5%-ը գտնում է, որ ունի դժվարություններ և բնակչության ցածր գնողունակություն, իրացման փոքր շուկան ստեղծում է իրացման խնդիրներ շուրջ 40%-ի մոտ:

Պատկեր 7. ՀՀ-ում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները (Տնտեսություն և պետական համակարգ)




Հարցվածների 38.5%-ը գտնում է, որ երկրում տիրող կոռուպցիան և բյուրոկրատիան բիզնեսին խոչընդոտող հիմնական էլեմենտներն են և եթե դրան ավելացնենք անկայուն տնտեսությունը՝ 23.5% և թույլ երկխոսությունը պետության և բիզնեսի միջև (19.1%), պատկերը կամբողջանա: Շուրջ 19%-ի հասնող անկատար դատական համակարգը նշանակում է, որ յուրաքանչյուր 5-րդ ՓՄՁ-ն ունի խնդիրներ դատական համակարգի հետ:

Պատկեր 8. ՀՀ-ում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները (Բիզնեսի վարման հստություններ և անձնակազմ)




Հատկանշական է, որ որակյալ աշխատուժի պակաս զգում է հարցվածների 36.4%-ը, իսկ հարցվածների մոտավորապես 64%-ը կարևորում են բիզնեսի կառավարման և մարկետինգային ոչ բավարար գիտելիքները: Այսպիսով, կրթական համակարգից սպասելիքները մնում են բարձր, իսկ բիզնեսի վարման և մարկետինգի տեսանկյունից կարևորվում են Որակի կառավարման համակարգերի ներդրման անհրաժեշտությունը:

Պատկեր 9. ՀՀ-ում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները (Ֆինանսական միջոցներ)




Եթե ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը և հայաստանյան բանկերի կողմից սահմանված տոկոսադրույքները մինչև ուսումնասիրությունը դիտվում էր առաջնային, ապա ձեռնարկությունների ցածր վճարունակության 48.1%-ը որոշակիորեն հաստատում է այն փաստը, որ ՓՄՁ-ների շուրջ 48%-ը կամ մոտ կեսը ընդհանուր թվաքանակում մի կերպ է եկամուտներ վաստակում և հաճախ գոյատևում են գտնվելով սևանկացման մշտական սպառնալիքի տակ:

Պատկեր 10. ՀՀ-ում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները (ՓՄՁ աջակցման քաղաքականություն)



Հարցվածները կարծում են, որ ՓՄՁ-ների հիմնական խնդիրներից են նաև կառավարության և ՓՄՁ աջակցող կազմակերպությունների թույլ և ոչ նպատակային քաղաքականությունը՝ մոտավորապես 50-ական տոկոս:

Պատկեր 11. Բիզնեսին խոչընդոտող այլ խնդիրներ



Այլ խնդիրների տակ նաև նշվել են լրացուցիչ խոչընդոտներ՝

- ապրանքային ներկրման ոչ ճիշտ քաղաքականություն՝ բարձր մաքսային տուրքեր
- արժույթի տատանում
- Էներգետիկ ռեսուրսների բարձր դրույքաչափեր
- տնտեսության թույլ կառուցվածք

Բիզնեսին խոչընդոտող հիմնական այլ խնդիրների շարքում հարցվածները ուղղորդված 2 պատասխանները՝ Քաղաքական կամքի բացակայություն և Առաջատար տեխնոլոգիաներ ձեռք բերելու համար անբավարար ռեսուրսներ կարևորել են մոտավորապես հավասարաչափ (50.3% և 49.7%): Հարցվածների կողմից ոչ ուղղորդված 102 պատասխանների թվում առավելապես կարևորվել են տնտեսության թույլ կառուցվածքը 28% և Էներգետիկ ռեսուրսների բարձր դրույքաչափերը 26.8%, որոնց մեջ էական են էլեկտրաէներգիայի և գազի գները:

Աղյուսակ 1. Վերջին 5 տարիների ընթացքում (2009-2014), որ խնդիրներն են եղել ամենա ազդեցիկը

Ընդհանուր համար	Խնդիր	Պորցենտ
1.	Ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը և բարձր տոկոսադրույքները	19.6%
2.	Անկայուն տնտեսություն	17.9%
3.	Բարձր հարկեր	17.0%
4.	Բնակչության ցածր գնողունակությունը	16.1%
5.	Կոռուպցիա	15.2%
6.	Հարկային օրենքների ոչ հստակ և ոչ կոնկրետ ձևակերպումները, երկիմաստ կետերը	10.7%
7.	Օրենքների հաճախակի փոփոխությունը	9.8%
8.	Բարձր և անհավասար մրցակցություն	9.8%
9.	Որակյալ աշխատուժի պակաս	9.8%
10.	Թույլ երկխոսություն պետության և բիզնեսի միջև	8.0%
11.	Ձեռնարկությունների ցածր վճարունակությունը	8.0%
12.	Անկատար դատական համակարգ	7.1%
13.	Առաջատար տեխնոլոգիաներ ձեռք բերելու համար անբավարար ռեսուրսներ	7.1%
14.	Թույլ մրցունակություն	6.3%
15.	Իրացման փոքր շուկաները	6.3%
16.	Բյուրոկրատիա	6.3%
17.	Քաղաքական կամքի բացակայություն	6.3%

18.	Շուկա մուտք գործելու դժվարությունները	5.4%
19.	Բիզնեսի վարման և կառավարման ոչ բավարար գիտելիքներ	5.4%
20.	Մարկետինգային ոչ բավարար գիտելիքներ	3.6%
21.	Կառավարության թույլ քաղաքականությունն ուղղված ՓՄՁ զարգացմանը	2.7%
22.	Անկատար օրենսդրություն, օրենքների մեծ քանակ	1.8%
23.	Շուկայից դուրս գալու դժվարությունները	1.8%
24.	ՓՄՁ աջակցող կազմակերպությունների թույլ քաղաքականություն	0.9%

Հարցվածների մոտավորապես 38%-ը համարում են, որ 2009-2014թթ. ընթացքում ամենա ազդեցիկ խնդիրներից են՝ ՀՀ-ի անկայուն տնտեսությունը և ֆինանսական ռեսուրսների անմատչելիությունը:


Աղյուսակ 2. Վերջին 5 տարիների ընթացքում, որ կետերի ազդեցությունն է սվազել բարեփոխումների ընթացքում

1.	Բյուրոկրատիա	18.8%
2.	Կոռուպցիա	11.6%
3.	Բարձր հարկեր	8.9%
4.	ՓՄՁ աջակցող կազմակերպությունների թույլ քաղաքականություն	7.1%
5.	Որակյալ աշխատուժի պակաս	5.4%
6.	Կառավարության թույլ քաղաքականությունն ուղղված ՓՄՁ զարգացմանը	4.5%
7.	Օրենքների հաճախակի փոփոխությունը	4.5%
8.	Անկատար օրենսդրություն, օրենքների մեծ քանակ	3.6%
9.	Թույլ երկխոսություն պետության և բիզնեսի միջև	3.6%
10.	Բիզնեսի վարման և կառավարման ոչ բավարար գիտելիքներ	3.6%
11.	Հարկային օրենքների ոչ հստակ և ոչ կոնկրետ ձևակերպումները, երկիմաստ կետերը	2.7%
12.	Անկայուն տնտեսություն	2.7%
13.	Շուկա մուտք գործելու դժվարությունները	2.7%
14.	Անկայուն տնտեսություն	2.7%
15.	Ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը և բարձր տոկոսադրույթները	1.8%
16.	Իրացման փոքր շուկաները	1.8%
17.	Քաղաքական կամքի բացակայություն	1.8%
18.	Բարձր և անհավասար մրցակցություն	1.8%
19.	Բնակչության ցածր գնողունակությունը	0.9%
20.	Անկատար դատական համակարգ	0.9%
21.	Շուկայից դուրս գալու դժվարությունները	0.9%


Ուշագրավ է, որ հարցվածների 30 տոկոսից ավելին գտնում են, որ բյուրոկրատիան և կոռուպցիան վերջին հինգ տարիների ընթացքում պակասել է, իսկ այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսին են 15-21 կետերը, ապա դրանք չեն սվազել և մնում են կարևոր խոչընդոտների շարքում:

Ի՞նչ զգալի փոփոխություններ եք ունեցել բարեփոխումների արդյունքում վերջին 5 տարվա կտրվածքով...

Պատկեր 12. Առաջընթացի մասով



Պատկեր 13. Հետընթացի մասով




Հարցվածների 75.9%-ը գտնում են, որ **առաջընթաց** կարելի է համարել այն, որ նվազել է բյուրոկրատիան և լավացել են մրցակցային պայմանները: Այսպիսով, չնայած ՓՄՁ դժգոհությանը ՓՄՁ քաղաքականության վերաբերյալ, այնուամենայնիվ եղել են դրական բարեփոխումներ, որոնց արդյունքում ստացվել են նշված պատասխանները: **Հետընթաց** համարելով շրջանառության ծավալների նվազումը՝ 56.3% և որակյալ աշխատուժի պակասը՝ 28.2%: Շրջանառության ծավալների նվազումը պայմանավորված է քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների գնողունակության անկման և միգրացիայի պատճառով: Աշխատուժի խնդիրը էլ ավելի է սրվում աշխատանքային միգրացիայի և էլ ավելի մրցունակ տնտեսությունն ձևավորելու հետևանքով:

Աղյուսակ 3. Գոհ եք արդյոք ՀՀ կառավարության 2014-2015թթ. Օրենսդրական բարեփոխումներից

	Այո	Ոչ	Չեն պատ.
Ընտանեկան ձեռնարկատիրության մասին ՀՀ օրենքը	58.0%	25.0%	17.0%
Շրջանառության հարկի մասին ՀՀ օրենքը	33.1%	58.9%	8.0%
Սահմանամերձ գոտիներում շահութահարկի արտոնությունների մասին ՀՀ օրենքը	66.0%	17.1%	16.9%
50 մլրդ դրամ և ավելի արտահանման դեպքում շահութահարկի նվազեցման մասին ՀՀ օրենքը	21.4%	61.6%	17.0%


Եթե Սահմանամերձ գոտիներում շահութահարկի արտոնությունների մասին և Ընտանեկան ձեռնարկատիրության մասին ՀՀ օրենքներից գոհ են հարցվածների համապատասխանաբար 66% և 58 %-ը, ապա Շրջանառության հարկի մասին և 50 մլրդ դրամ և ավելի արտահանման դեպքում շահութահարկի նվազեցման մասին ՀՀ օրենքներից դժգոհ են համապատասխանաբար 58.9%-ը և 61%-ը: Հետաքրքրական է, որ բոլոր 4 օրենքների վերաբերյալ հարցվածների 17%-ը չի ցանկացել արտահայտել իրենց կարծիքը:

Պատկեր 14. Ինչպես եք գնահատում 2009–2014թթ. ռեֆորմների ազդեցությունը ձեր բիզնեսի վրա



Ցավոք հարցվածների մոտ կեսը՝ 46.4%-ը գտնում է, որ ռեֆորմների ազդեցությունը իրենց բիզնեսի վրա ոչ մի ազդեցություն չի թողել: Ավելին 31.3%-ը կարծում են, որ ռեֆորմները իրենց բիզնեսի վրա բացասական են ազդել: Եվ միայն 14.3%-ը կարծում է, որ ռեֆորմները 2009 ÷ 2014թթ. իրենց բիզնեսի վրա դրական ազդեցություն է թողել: Սա էական է ՓՄՁ քաղաքականությունը լավացնելու համար:

Պատկեր 15. ՓՄՁ օրենքների ազդեցության տեսանկյունից, որ տարին է ամենա հաջողը միկրո և ՓՄՁ զարգացման համար




ՓՄՁ-ները ամենահաջողված տնտեսական տարի համարում են 2009թ.՝ 23.2%: Այսուհետև, 2014թ.-ը՝ 19.6%: 2010-2013թթ.-ը համարվում են ավելի անհաջող տարիներ:

«Ի՞նչ է անհրաժեշտ ձեր կազմակերպության զարգացման համար» հարցը, ենթադրում էր երկու՝ ուղղորդված և ոչ ուղղորդված պատասխաններ: Ուղղորդված հարցադրումները բաղկացած են երկու մասերից՝ ա) ձեռնարկություն և բ) գործարար միջավայր:

Կազմակերպությունների հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝


ա) **ՓՄՁ-ների տեսանկյունից** հարցվածները գտնում են, որ անհրաժեշտ են ֆինանսական ռեսուրսների մատչելի հասանելիություն (68.8%), նոր տեխնոլոգիաների և նորարարությունների ներդրում (45.5%): Կարևորում են նաև ձեռնարկությունների մոդեռնիզացումը (28.6%), անձնակազմի ուսուցումը (27.7%), մենեջմենթի բարելավումը (25.9%), սերտիֆիկացում (21.4%), աշխատողների աշխատանքային պայմանների ապահովում աշխատանքի պաշտպանության միջոցով (18.8%):

Պատկեր 16. Ինչ է անհրաժեշտ կազմակերպությանը զարգացման համար (ՓՄՁ-ների տեսանկյունից)



բ) **գործարար միջավայրի տեսանկյունից** հարցվածների 2/3-ից ավելին՝ 67.0%-ը գտնում են, որ անհրաժեշտ է, որ ամեն ինչ անել 33 տնտեսության կայունությունը ապահովելու համար: Ձևավորել բարենպաստ բիզնես միջավայր՝ 48.2% հարցվածների: Բիզնես ներարկել մատչելի ֆինանսական միջոցներ՝ 58.9% հարցվածների, ապահովել հավասար մրցակցություն՝ 45.9% հարցվածների, պատրաստել որակյալ, մասնագիտացված աշխատուժ՝ 43.8% և իրականացնել ՓՄՁ-ների հետագա զարգացմանն ուղղված արմատական փոփոխություններ՝ 42.0% հարցվածներ:

Պատկեր 17. Ինչ է անհրաժեշտ կազմակերպությանը զարգացման համար (գործարար միջավայրի տեսանկյունից)




Այսպիսով, ամփոփ կազմակերպության զարգացման համար անհրաժեշտ են՝

1. Ֆինանսական միջոցներ
2. Ցածր տոկոսով վարկեր
3. Բյուրոկրատիայի նվազեցում
4. Բնակչության կենսամակարդակի աճ
5. Մասնագիտացված որակյալ աշխատուժ
6. Նոր առաջատար տեխնոլոգիաներ և սարք-սարքավորումներ
7. Հարկային քաղաքականության պարզեցում
8. ԴԱՀԿ ծառայության անհարկի միջամտության բացառում
9. Անհավասար մրցակցություն
10. Միջազգային ISO ստանդարտների ներդրման մատչելիություն

Այս ոչ ուղղորդված հարցին տրված 112 պատասխանները նույնպես շատ կարևոր են ճիշտ պատկերացում կազմելու համար ոչ միայն բիզնեսին խոչընդոտող խնդիրների վերաբերյալ, այլ նաև թե ինչ է անհրաժեշտ կազմակերպություններին հետագա զարգացման համար:


Ընդհանուր առմամբ արձանագրված 112 պատասխաններից կարելի է հետևության գալ, որ կազմակերպությունները ունեն ֆինանսական միջոցների պակաս և բիզնեսին այդքան անհրաժեշտ ցածր տոկոսով վարկեր («Էժան փող» հասկացողությունը) ՀՀ-ում դեռևս երազանք է: Կարևորում ենք նաև այն, որ այժմ արդեն գործարար համայնքը երազում է նոր առաջավոր տեխնոլոգիաների, սարք-սարքավորումների, որակյալ աշխատուժի մասին, կարևորելով միջազգային ISO ստանդարտների ներդրման մատչելիությունը:

Պատկեր 18. Ինչպիսի՞ քայլեր պետք է իրականացնի Կառավարությունը ՓՄՁ զարգացման համար




Գործարար համայնքը գտնում է, որ ՀՀ կառավարությունը ՓՄՁ-ների զարգացման համար պետք է հնարավորություն գտնի ցածր տոկոսադրույթով վարկեր տրամադրելու վերաբերյալ և մեխանիզմ մշակի, պարզեցնի հարկային օրենսդրությունը (49.1%), նվազեցնի հարկերը (37.5%) և ապահովի հավասար մրցակցություն:

Պատկեր 19. Ինչպիսի քայլեր պետք է իրականացնեն բիզնեսին աջակցող կազմակերպությունները ՓՄՁ զարգացման համար




Բիզնեսին աջակցող կազմակերպություններից և կառույցներից ակնկալվում է ներդրողների և արտաքին շուկաների հայտնաբերում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում, բիզնես կապերի ձևավորում, խորհրդատվական մատչելի ծառայությունների ապահովում: Նման ծառայությունները պետք է տրամադրեն ՓՄՁ ՁԱԿ-ը, ՀԳՀՄ-ն և այլ բիզնեսին աջակցող կազմակերպություններ:


Ինչպիսի ծառայությունների կարիք ունեն ՓՄՁ-ները
Պատկեր 20. Տեղեկատվություն




Պատկեր 21. Խորհրդատվություն



Պատկեր 22. Կրթություն և վերապատրաստում



Պատկեր 23. Արտահանման խթանում



Ըստ ոլորտների ՓՄՁ-ները առանձնացրել են հետևյալ հարցերը՝

ա) Տեղեկատվություն՝ մատչելի վարկերի, օրենսդրության, արտաքին շուկաների վերաբերյալ:


բ) Խորհրդատվություն՝ ինչպես գտնել ներդրողներ և գործընկերներ, ինչպես պլանավորել բիզնեսը, վարկ ստանալիս օժանդակել գրագետ փաթեթ ներկայացնելու համար:

գ) Կրթություն և վերապատրաստում՝ ուրախալի է, որ նոր մտածելակերպը ձևավորվել է և գործարար համայնքը կարևորում է բիզնեսի պլանավորման, մարկետինգի խնդիրները և ցանկություն ու կարիք ունի կրթությունը շարունակելու և վերապատրաստվելու:

դ) Արտահանման խթանում՝ արտաքին շուկաների մասին տեղեկատվության հետ միաժամանակ ՓՄՁ-ները կարևորում են ISO միջազգային ստանդարտների ներդրումը, ԵՏՄ և ԵՄ ստանդարտներին համահունչ արտադրանք ունենալը՝ գիտակցելով, որ առանց դրա հնարավոր չէ միջազգային (ԵՄ և Եվրասիական) շուկաներ ապրանք արտահանելը:

Ի՞նչ եք կարծում, որոնք են ստվերային տնտեսության առաջացման պատճառները

Պատկեր 24. Ստվերային տնտեսության առաջացման պատճառները



Կարևորելով բիզնեսին խոչընդոտող խնդիրների շարքում ստվերի առկայությունը, սույն հարցաշարում ներառվեց վերոհիշյալ հարցադրումը: Եվ ինչն է հատկանշականը՝ բոլոր 8 պատասխանները կարևորվել են: **Ցավոք դրանց մեջ առանձնանում են կոռուպցիան և բյուրոկրատիան, ընդհանուր՝ 26.0%:**

Աղյուսակ 4. Ինչպես եք գնահատում սոցիալական գործընկերների դերը ՓՄՁ խնդիրների լուծման հարցերում

	Բարձր	Լավ	Բավարար	Ցածր	Չեն պատ.
33 կառավարություն	7.1%	8.9%	29.5%	49.1%	5.4%
3այաստանի արհմիությունների կոնֆեդերացիա	3.6%	13.4%	18.8%	53.6%	10.7%
3այաստանի գործատուների հանրապետական միություն (3Գ3Մ)	29.5%	36.6%	14.3%	16.1%	3.6%

ծուրջ 49.1%-ը ցածր է գնահատում ՀՀ կառավարության դերը սոցիալական գործընկերության բնագավառում ՓՄՁ խնդիրների կարգավորման հարցում:

Հարցվածները իրենց գնահատականը արտահայտելով սոցիալական երեք գործընկերների վերաբերյալ ցածր են գնահատել՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (53.6%) և ՀՀ կառավարության (49.1%) գործունեությունը: Հայաստանի գործատուների հանրապետական միության գործունեությունը գնահատել են լավ (36.6%), անգամ բարձր՝ 29.5%: Սոցիալական երկխոսության եռակողմ հանրապետական կոլեկտիվ պայմանագրի նոր տարբերակը 2015-2018թթ. համար կստորագրվի 2015թ. օգոստոսին: Պայմանագրում ավելացել է նոր բաժին «սոցիալ-տնտեսական» անվանումով, որը ներառում է ՓՄՁ զարգացման նպատակները:


Աղյուսակ 5. Ձեր կարծիքով ձեռնարկությունները զարգանում են, թե անկում ապրում (Ձեր և Ձեր ծանոթների շրջանում)

	Չարգանում են	Անկում են ապրում	Չեն պատասխանել
Գերփոքր ընկերությունները	3.6%	86.6%	9.8%
Փոքր ընկերությունները	4.5%	87.5%	8.0%
Միջին ընկերությունները	14.3%	75.0%	10.7%
խոշոր ընկերությունները	62.5%	23.2%	14.3%


ՀՀ-ում ձեռնարկությունների գործունեության դինամիկան (զարգացում, թե անկում) գնահատելով, հարցվածները գտնում են, որ գերփոքր և փոքր ընկերությունները շեշտակի անկում են ապրում, համապատասխանաբար 86.6% և 87.5% հարցվածների: Միջին ընկերությունների մոտ անկման տոկոսը մի քիչ փոքր է՝ 75.0%: Եվ միայն խոշոր ընկերություններն են, որ կարողանում են դիմակայել և զարգանալ՝ 62.5% հարցվածներ:

Տնտեսության ո՞ր ոլորտներում է առկա զարգացման կամ անկման դինամիկա

Պատկեր 25. Զարգացման դինամիկան տնտեսության ոլորտներում



Պատկեր 26. Անկման դինամիկան տնտեսության ոլորտներում




Ըստ ոլորտների հարցվածների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ՝

ա) զարգացման դինամիկա է առկա տեղեկատվական տեխնոլոգիաների (72.3%), անևրի վերամշակման ձեռնարկությունների (32.1%) մոտ: Գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը և թեթև արդյունաբերությունը (տեքստիլ, կար, կոշիկ) նույնպես զարգացման դինամիկա ունեն,

բ) անկման դինամիկա ունեն, ցավոք, մանրածախ առևտուրը (58%), շինարարությունը (42.9%), անկում են ապրում նաև ծառայություններ մատուցող անևրի օբյեկտները, գեղեցկության սրահները, ստոմատոլոգիական պոլիկլինիկաները 29.5% հարցվածները: Անկում ապրող ձեռնարկությունների

շարքում են նաև, ցավոք, ճշգրիտ ճարտարագիտություն (24.1%), նախագծային աշխատանքներ իրականացնող (17.9%) և շինարարական կյուբերի արտադրության ձեռնարկությունները (22.3%):

Պատկեր 27. Արդյոք կարևորում եք ՓՄՁ-ների զարգացումը մեր երկրի համար: Եթե այո, ապա ինչու՞:



Հարցվածների 85.7%-ը կարևորում են մեր երկրի տնտեսության դինամիկ զարգացման համար ՓՄՁ-ների դերակատարումը հետևյալ հիմնական նկատառումներով: Ընդհանուր առմամբ արձանագրվել է 112 պատասխան: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում առավել հաճախ կրկնվող պատասխանները:

- Կստեղծվեն նոր աշխատատեղեր
- Կբարձրանա բնակչության կենսամակարդակը
- Կնվազի արտագաղթը
- Տնտեսությունը կտրուկ վերելք կապրի
- Կնվազի սոցիալական լարվածությունը
- Կձևավորվի միջին խավ
- Կձերբազատվենք օլիգարխիկ տնտեսությունից
- Մոնոպոլիզացիայից անցում կանենք դեպի դիվերսիֆիկացված տնտեսություն
- Էապես կավելանան հարկատուները

Այսպիսով, ամփոփելով ՓՄՁ-ներին վերաբերվող հարցումներն և վերլուծության արդյունքները, ստանում են շատ հետաքրքիր արդյունքներ, որոնք առանձնապես կարևոր են ՓՄՁ հետագա պետական աջակցության ծրագրերի, միջազգային դոնորների օգնությամբ իրականացվող բարեփոխումների համար: ՓՄՁ նկատմամբ վարվող քաղաքականությունը Էական վերանայման կարիք ունի, քանի որ չնայած տարբեր հարկային օրենսդրության փոփոխությունների և կատարված ռեֆորմների՝ ՓՄՁ-ները իրենց պատասխաններում արտահայտել են զգալի դժգոհություններ և խնդիրներ, որոնք առկա են իրենց զարգացման ճանապարհին: Բացի այդ, տրված պատասխանները առանձնահատուկ ուշադրության են արժանի ՀԳՀՄ և ՓՄՁ աջակցման այլ կազմակերպությունների համար: ՓՄՁ կողմից նշված խնդիրներում և կարիքներում Էական տեղ ունեն կրթության հանդեպ պահանջները՝ որակյալ աշխատուժի տեսանկյունից, ՓՄՁ միջազգայնացման խնդիրները, որոնք ներառում են նոր շուկաների հայտնաբերման համար աջակցության ծրագրերը, մարկետինգը և ISO որակի ստանդարտների կիրառությունը, միջազգային սերտիֆիկատների առկայությունը:


3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԻԶՆԵՍԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏ)

Լրացվել է 30 հարցաշար ՀՀ Էկոնոմիկայի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՓՄՁ ՁԱԿ, Վերլուծական կենտրոնների և տնտեսագետ վերլուծաբանների կողմից:

Աղյուսակ 6. Արդյո՞ք ՀՀ կառավարության 2014-2015թթ. օրենսդրական հետևյալ բարեփոխումները տվել են ակնկալվող արդյունքները՝

	Այո	Ոչ	Այլ
Ընտանեկան ձեռնարկատիրության մասին ՀՀ օրենքը	42.3%	50.0%	7.7%
Շրջանառության հարկի մասին ՀՀ օրենքը	38.5%	46.2%	15.3%
Սահմանամերձ գոտիներում շահութահարկի արտոնությունների մասին ՀՀ օրենքը	46.2%	42.3%	11.5%
50 մլրդ դրամ և ավելի արտահանման դեպքում շահութահարկի նվազեցման մասին ՀՀ օրենքը	38.5%	50.0%	11.5%

Պատկեր 28. Ինչպիսի՞ քայլեր պետք է կատարի ՀՀ կառավարությունը ՓՄՁ զարգացման համար



Աղյուսակ 7. Ինչպե՞ս եք գնահատում սոցիալական գործընկերների դերը ՓՄՁ խնդիրների լուծման հարցերում

	Բարձր	Լավ	Բավարար	Ցածր
ՀՀ կառավարություն	13.3%	6.7%	26.6%	53.4%
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա	6.7%	13.4%	26.8%	53.1%
Հայաստանի գործատուների հանրապետական միություն	26.7%	33.3%	30.0%	10.0%

Տնտեսության ո՞ր ոլորտներում է առկա

...զարգացման դինամիկան

- տեղեկատվական տեխնոլոգիաներ
- սննդի վերամշակման արդյունաբերություն
- ոսկերչություն
- ջերմոցային տնտեսություն
- հանքարդյունաբերություն
- թեթև արդյունաբերություն (տեքստիլ, կար, կոշիկ)

...անկման դինամիկան

- մանրածախ առևտուր
- շինարարություն
- ծառայություններ (սննդի օբյեկտներ, գեղեցկության սրահներ, ստոմատոլոգիա)
- ճշգրիտ ճարտարագիտություն
- շին նյութերի արտադրություն
- նախագծային աշխատանքներ

Ըստ Ձեզ ՀՀ տնտեսության ո՞ր բնագավառում են ՓՄՁ-ները

...զարգանում

- սննդի վերամշակման արդյունաբերություն
- գյուղատնտեսություն
- ջերմոցային տնտեսություն
- ծառայություններ
- թեթև արդյունաբերություն (տեքստիլ, կար, կոշիկ)

...անկում ապրում

- մանրածախ առևտուր
- անասնապահություն
- շինարարություն
- ծառայություններ (սննդի օբյեկտներ, գեղեցկության սրահներ, ստոմատոլոգիա)
- ճշգրիտ ճարտարագիտություն
- շին նյութերի արտադրություն
- նախագծային աշխատանքներ

Կարևորում էք ՓՄՁ-ների զարգացումը Հայաստանի համար և ինչու՞

1. Աղքատության նվազում
2. Զբաղվածության խթանում
3. Միջին խավի ձևավորում
4. Սերունդների միջև ներդաշնակ կապի ապահովում
5. Տնտեսության համաչափ զարգացում

Աղյուսակ 7. Ձեր կարծիքով որքանո՞վ են համապատասխանում հետևյալ նշումները իրականությանը

	Նշումներ	չեմ հաստատում (%)	հաստատում եմ վերապահումով (%)	հաստատում եմ (%)
1	ՀՀ կրթական համակարգը կարողանում է լավագույնս բավարարել ՀՀ աշխատաշուկայի պահանջները ՓՄՁ-ների շրջանում	73.3	26.7	-
2	ՓՄՁ-ների ընգրկվածությունը մեծ է ՀՀ կրթական համակարգի բարելավման գործում	66.7	33.3	-
3	ՀՀ սոցիալական համակարգը համահունչ է կառուցված ՀՀ ՓՄՁ-ների գործունեության, առանձնահատկությունների և կառուցվածքի հետ և դրանք փոխադարձաբար միմյանց լրացնում են	73.3	26.7	-
4	ՀՀ կրթական համակարգի ինտեգրումը միասնական եվրոպական կրթական տարածքին էապես մեծացրել է ՓՄՁ-ների՝ կադրերի նկատմամբ պահանջմունքների բավարարվածությունը և ՓՄՁ-ների ընգրկվածությունը կրթական համակարգի բարելավման գործընթացներին	46.7	40.0	13.3
5	Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը ՓՄՁ-ների ոլորտում մեծապես աճել է վերջին 3 տարվա ընթացքում	73.3	26.7	-
6	Վերջին 3 տարվա ընթացքում ՓՄՁ-ներին տրամադրվող հարկային, վարկային, աջակցության գործիքների և այլ արտոնությունների ծավալն էապես աճել է Հայաստանում	40.0	40.0	20.0
7	Աշխատանքի պաշտպանությունը ՀՀ ՓՄՁ-ներում պատշաճ ձևով է իրականացվում	80.0	20.0	-

8	Հայաստանում ՓՄՁ-ներում աշխատողների միջին աշխատավարձը՝ առանց հարկերի, գերազանցում է ՀՀ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը	20.0	46.7	33.3
9	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի համագործակցությունը խիստ արդյունավետ է ՓՄՁ-ների զարգացման և աջակցման հարցում	86.6	6.7	6.7
10	ՀՀ բիզնես ենթակառուցվածքների զարգացումը Հայաստանում խիստ նպաստել է ՓՄՁ-ների թվի աճին և գործունեության բարելավմանը	73.3	26.7	-
11	Հայաստանում գիտելիքի տնտեսության և նորարարության խթանումը խիստ նպաստել է ՓՄՁ-ների նորարարացմանը վերջին 3 տարիների ընթացքում	60.0	40.0	-
12	Այժմ ՀՀ ՓՄՁ-ները մեծապես օգտվում են մրցակցային տնտեսության զարգացման պայմաններից	93.3	6.7	-
13	Հայաստանում տարածքային զարգացման անհամաչափությունների նվազեցումը էապես խթանել է ՓՄՁ-ների թվի աճին և գործունեության բարելավմանը մարզերում վերջին 1 տարվա ընթացքում	66.7	26.6	6.7
14	Հայաստանի ԵՏՄ-ին անդամակցությունը էապես բարելավել է Հայաստանում ՓՄՁ-ների գործունեության բարելավմանը	60.0	33.3	6.7

1- 3 հարցերում բացակայում է «հաստատում եմ» կատեգորիայով պատասխանը, որը խոսում է այն մասին, որ ոլորտի պատասխանատուները կամ չեն տիրապետում իրավիճակին, կամ չունեն հաստատող պատասխաններ:

4-7 հարցերում երևում է, որ աշխատանքի պաշտպանության բնագավառում թե ոլորտի ներկայացուցիչները, և թե մյուս պետական մարմինների ներկայացուցիչները համարում են, որ ՓՄՁ-ներում պատշաճ ձևով չի իրականացվում աշխատանքի պաշտպանությունը:

Ձեր նախարարության շրջանակում մշակվո՞ւմ է ՓՄՁ-ների աջակցության նոր գործիքակազմ

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվում են քայլեր կրթական ծրագրերում ձեռներեցության և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված դասընթացների կազմակերպման ուղղությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միակ գործիքը, որ մշակվել և կիրառվում է Չբաղվածության ամենամյա ծրագրի շրջանակներում դա ներդրված նոր ծրագիրն է, որը կոչվում է «Աջակցություն գործազուրկներին ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար»: Ծրագիրը նոր է՝ սկսվել է 2014թ-ի կեսերից և նրա արդյունավետության մասին խոսելը դեռ շուտ է: Այս տարվա վերջին նախատեսվում է իրականացնել ծրագրի արդյունավետության մոնիտորինգ և գնահատում, որից հետո պարզ կլինի արժե շարունակել նույն կերպ, թե անհրաժեշտ է փոփոխել ծրագրի ընթացակարգերը, այն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Արդյո՞ք Ձեր նախարարությունը նախապատրաստում է նոր բարեփոխումների առաջարկ ՓՄՁ-ների զարգացումը խթանելու համար, եթե այո, ապա ինչպիսի ուղղվածությամբ

Ցավոք, դեռևս հստակ առաջարկներ ձևավորված չեն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

4.1. Եզրակացություններ՝ ըստ ՓՄՁ-ների

1. Հարցմանը մասնակցած կազմակերպությունների շուրջ 55%-ը ունի բիզնեսում 10 տարվա փորձառություն, որը մեծացնում է տրված պատասխանների հավաստիությունը: 6-9 տարի փորձառությունը կազմում է 13.4%: Այսպիսով, ընդամենը 6-10 տարի և ավել 68% է:
2. Չնայած ՀՀ կառավարության կողմից իրականացված մի շարք բարեփոխումների և ՓՄՁ-ներին աջակցող ծրագրերի հարցվածների 50.0%-ը գտնում են, որ բարեփոխումները չեն տվել ակնկալվող արդյունքները:
3. ՓՄՁ-ների 21.1%-ը գտնում են, որ այնուամենայնիվ հարկերը բարձր են, հարկային օրենքների ոչ հստակ ձևակերպումները առաջացնում են խոչընդոտներ շուրջ 33%-ի մոտ, իսկ օրենքների հաճախակի փոփոխությունը խնդիր է առաջացնում շուրջ 27.5%-ի մոտ, հետևաբար ՀՀ կառավարությունը պետք է զգուշորեն և արդյունավետորեն իրականացնի հարկային բարեփոխումները և բարձրացնի դրանց իրազեկման և ընկալման գործընթացները:
4. Ֆինանսական ռեսուրսների հասանելիությունից դժգոհ են հարցվածների 68.8%-ը: Ընդ որում դժվարությունը վարկերի և բարձր տոկոսադրույքների դեպքում նշել է մոտ 52%-ը: Սա մտորումների լուրջ առիթ է տալիս: ՀՀ կառավարությունը և Կենտրոնական բանկը պետք է կոնկրետ քայլեր իրականացնեն պարզեցնելու վարկերի տրամադրման մեխանիզմները: Դասակարգել առկա ռիսկերը և ներդնել ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգեր:
5. Հարցված ՓՄՁ-ները նշում են, որ պետության և բիզնեսի միջև թույլ երկխոսությունը 19% է, իսկ բարձր բյուրոկրատիան 16.7% է: Երկխոսության արդյունքում կարող է բյուրոկրատիան էականորեն նվազել: Անկայուն տնտեսությունը 23.5% մտնում է կարևոր խոչընդոտներից մեկը:
6. Բիզնեսը առանձնապես աչքի չի ընկնում իր կառավարման և մարկետինգային գիտելիքներով՝ համապատասխանաբար կառավարումը 32% է, մարկետինգը 31.6%: Որակյալ աշխատուժը դեռևս մտնում է առաջնահերթ խնդիրներից մեկը բիզնեսի համար, այն է՝ 36.4%: Կրթական համակարգը էականորեն պետք է մոտեցվի աշխատաշուկայի պահանջներին:
7. Հարցված ՓՄՁ-ները (50.3%) գտնում է, որ ՓՄՁ ոլորտում բացակայում է քաղաքական կամքը: Սա կարևոր գործոն է կառավարության կողմից անհրաժեշտ բարեփոխումների և կառավարության հանդեպ վստահությունը բարձրացնելու տեսանկյունից:
8. ՓՄՁ-ները կարևորում են առաջատար տեխնոլոգիաները իրենց արտադրողականության բարձրացման հարցում, սակայն շուրջ 49.7%-ը նշել է, որ բավարար ռեսուրսներ չունեն դրանք ձեռք բերելու համար:
9. 2009-2014թթ.-ի համար որպես ազդեցիկ խնդիրներ ՓՄՁ-ները նշել են ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը և բարձր տոկոսադրույքները 19.6%; անկայուն տնտեսությունը 17.9%; բարձր հարկերը 17%; բնակչության ցածր գնողունակությունը 16.1%; կոռուպցիան 15.2%; հարկային օրենքների երկիմաստությունը 10.7%; օրենքների հաճախակի փոփոխությունը 9.8%; բարձր և անհավասար մրցակցությունը 9.8%; որակյալ աշխատուժի պակասը 9.8%; թույլ երկխոսությունը պետության հետ 8%:
10. Վերջին 5 տարվա կտրվածքով ՓՄՁ-ները նշել են դրական փոփոխությունները բյուրոկրատիայի նվազման (40.9%), լավացել են մրցակցային պայմանները 35%, նվազել են հարկերը 13.4%:
11. 2009-2014թթ.-ի ռեֆորմների ազդեցությունը բիզնեսի վրա գնահատվել է հետևյալ կերպ՝
 - ոչ մի ազդեցություն 46.4%
 - բացասական ազդեցություն 31.3%
 - դրական ազդեցություն 14.3%
12. ՓՄՁ-ն 2009-2014թթ.-ի համար որպես բիզնեսի հաջող տարի նշել են երկու տարիներ՝ 2009թ. (23.2%) և 2014թ. (19.6%): Այնուհետև տեղի է ունեցել վատթարացում,
13. ՓՄՁ-ները խիստ կարևորում են կառավարության դերը ՓՄՁ զարգացման գործում և ակնկալում են հետևյալ աջակցության ձևերը՝
 - Հարկերի նվազեցում 55.4%
 - Տրամադրի վարկեր ցածր տոկոսադրույքով 54.5%

- Պարզեցնի օրենսդրությունը 49.1%
- Ապահովի հավասար մրցակցություն 37.5%
- Պարզեցնի հարկային հաշվետվությունների համակարգը 35.7%
- Աջակցի նորարար տեխնոլոգիաներին 32.1%
- Մաքսատուրքերի նվազեցում 29.5%
- Աջակցի ձեռնարկությունների մոդեռնիզացիան 24.1%
- Արտահանման խթանում 22.3%

և հարցվողների 24.1%-ը անհրաժեշտ է համարում պատժամիջոցների բարձրացումը հարկ չվճարող կազմակերպությունների համար:

14. ՓՄՁ-ները իրենց տրամադրվող ծառայությունների տեսանկյունից կարևորել են տեղեկատվությունը, խորհրդատվությունը, անձնակազմի վերապատրաստումը և արտահանման խթանման համար ISO ստանդարտների համար կիրառությունը:
15. Սոցիալական գործընկերների դերակատարումը հատուկ հարցով նշվել է և ստացվել է հետևյալ պատասխանները՝ ՀՀ կառավարության դեպքում ցածր է գնահատվել 49.1%-ի կողմից, Հայաստանի արհմիությունների նկատմամբ ցածր է գնահատվել 53.6%-ի կողմից և ՀԳՄ-ի նկատմամբ ցածր է գնահատվել 16.1%-ի կողմից:
16. ՓՄՁ-ները գտնում են, որ տնտեսության զարգացման դինամիկա առկա է հետևյալ ոլորտներում՝
 - ՏՏ 72.3%-ի կողմից
 - Սննդի արդյունաբերություն 32.1%-ի կողմից
 - Գյուղատնտեսություն 25.9%-ի կողմից
 - Հանքարդյունաբերություն 25.9%-ի կողմից
 - Թեթև արդյունաբերություն 25%-ի կողմից
17. Անկման դինամիկա են նշել հետևյալ ոլորտներում՝
 - Մանրածախ առևտուր 58%
 - Շինարարություն 42.9%
 - Ծառայություններ 29.5%
18. ՓՄՁ-ների 85.7%-ը կարևորել է ՓՄՁ-ների զարգացումը երկրի տնտեսության զարգացման գործում:
19. ՓՄՁ-ների ընդամենը 51.8%-ը նշել է, որ բիզնեսը գտնվում է բավարար վիճակում, իսկ լավ՝ 12.5%-ը: Ընդամենը 64.3%-ը տվել է դրական գնահատական, վատ է նշել 20.5%-ը:
20. Էներգակիրների դրույթաչափերի բարձր լինելը նշել է շուրջ 26.8%-ը:
21. Արժույթի տատանումը որպես խնդիր նշել է 25.3%-ը:
22. ՓՄՁ-ները հավասարաչափ բաշխվածությամբ նշել են սովերային տնտեսության առաջացման կարևորագույն պատճառները՝ հարկային բեռը, կազմակերպությունների ցածր վճարունակությունը, կոռուպցիան, անհավասար մրցակցությունը, բյուրոկրատիան, բիզնեսի վարման թույլ մշակույթը, օրենսդրության վերաբերյալ անտեղյակությունը և հաշվապահի ցածր գիտելիքները:

4.2. Եզրակացություններ՝ ըստ պետական մամիների և ՓՄՁ աջակցման կազմակերպությունների

1. Լուրջ իրազեկման պակաս կա և հարցվածները տեղյակ չեն, թե արդյոք ՀՀ կրթական համակարգը կարողանում է լավագույնս բավարարել ՀՀ աշխատաշուկայի պահանջները ՓՄՁ-ների շրջանում, թե ոչ:
2. ՓՄՁ-ներին աջակցող պետական գործիքակազմը գտնվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության երկու կառույցների ներքո՝ ՓՄՁ ՉԱԿ և Մրցունակության ազգային հիմնադրամ: Սակայն ցավոք, փոքր և միջին բիզնեսին առնչվող հարցաշարում ներառված կոնկրետ հարցերի վերաբերյալ հիմնականում տրվել են «չեմ հաստատում» և «հաստատում եմ վերապահումով» պատասխաններ:

3. Ցավոք, դեռևս հստակ առաջարկներ ձևավորված չեն նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Չնայած հարցաթերթիկներում նշվել են, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվում են քայլեր կրթական ծրագրերում ձեռնարկության և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված դասընթացների կազմակերպման ուղղությամբ:
4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միակ գործիքը, որ մշակվել և կիրառվում է Չբաղվածության ամենամյա ծրագրի շրջանակներում դա ներդրված նոր ծրագիրն է, որը կոչվում է «Աջակցություն գործազուրկներին ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար»: Ծրագիրը նոր է՝ սկսվել է 2014թ-ի կեսերից և նրա արդյունավետության մասին խոսելը դեռ շուտ է: Այս տարվա վերջին նախատեսվում է իրականացնել ծրագրի արդյունավետության մոնիտորինգ և գնահատում, որից հետո պարզ կլինի արժե շարունակել նույն կերպ, թե անհրաժեշտ է փոփոխել ծրագրի ընթացակարգերը, այն ավելի արդյունավետ դարձնելու համար:

5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում մակրո և միկրո մակարդակներում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները մեղմելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել՝

Ա. Պետության կողմից՝

1. ՓՄՁ քաղաքականության էական վերանայում
2. ՓՄՁ հանդեպ աջակցման գործիքակազմի հասանելիության մատչելիություն
3. Հարկային օրենքներում ոչ հստակ և ոչ կոնկրետ ձևակերպումների և երկիմաստ կետերի վերանայում
4. Հավասար մրցակցության ապահովում
5. Պետության և բիզնեսի միջև երկխոսության ակտիվացում
6. Տնտեսության կայունացում
7. Ստվերային տնտեսության՝ ստվերի վերացում
8. Կոռուպցիայի և բյուրոկրատիայի նվազեցում և վերացում
9. Նպաստել ՓՄՁ-ների արդիականացմանը (Էժան վարկեր և աջակցման գործիքներ) սարքավորումների և տեխնոլոգիաների ձեռքբերում և այլն
10. Արտահանման խթանում
11. Էներգակիրների Էժանացում
12. Կրթության որակի բարձրացում
13. Ֆինանսների հասանելիության բարձրացում
14. Տնտեսական կայուն վիճակի ապահովում
15. Տնտեսության թույլ կառուցվածքի բարելավում (նշել է ՓՄՁ-ների 28%-ը)
16. Ներքին արժույթի՝ ՀՀ դրամի կայունություն
17. Հարկային բեռի նվազեցում
18. Հարկ վճարողների խթանում և չվճարողների հանդեպ արդյունավետ պատժամիջոցների կիրառում:

Բ. Տնտեսվարող սուբյեկտների կողմից

1. Բիզնեսի վարման և կառավարման գիտելիքների բարելավում
2. Աշխատուժի վերապատրաստում, այնքան շատ որքան կրթությունը թերանում է
3. Ռեսուրսախնայողության խթանում
4. Ձեռնարկությունների դիվերսիֆիկացիա
5. Արտահանման պոտենցիալի զարգացում, միջազգային որակի համակարգերի ներդրում և կիրառություն
6. Թրեյնինգների իրականացում որոշակի բնագավառներում (օրենսդրություն, մենեջմենթ, մարկետինգ, ISO ստանդարտներ)
7. Առաջատար տեխնոլոգիաների ներդրում:



Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խորենացու փող. 26ա
Հեռ.՝ (+37410) 52 74 21, 52 87 09
Էլ. փոստ՝ ruea@employers.am
Կայք՝ www.employers.am